Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

✝

ՀԱՆԳԻՍՏ

Ամենայն Հայոց վեհափառ եւ արքբազնագոյն Հայրապետ եւ ծայրագոյն պատրիարք կաթողիկոս

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.-Ի

—

Վերջին շաբաթները էջմիածնից գուժող հեռագիրները ծանուցել էին, որ Վեհափառ Կաթողիկոսը անակնկալ կերպով սրտի ծանր հիւանդութեան է ենթարկուել և բժշկական խորհրդակցութիւններ են կատարւում։ Հայ ժողովուրդը աշխարհիս ամեն կողմից ի-

բանց վշտակցութիւնն ու որդիական յարգանքներն էին ուղարկում Լուսաւորչի արժանընտիր գահակալին հեռագիրներով և նամակներով։ Ամբաղրութիւնս էլ նոյն զգացմունքները մատուցել էր Նորին Օրբութեան մի գրութեամբ յանուն Հայրապետական գաւազանակիր տ. Մեսրովպ վ. Նշանեանի։

Ժողովրդի ուրախութեան չափ չըկար, երբ Էջմիածնից հեռագիրներն աւետեցին, որ վեհի հիւանդութիւնը անցել է իսպառ և Հայրապետն իրան բոլորովին առողջ զգալով նուիրուել է իր սովորական պարապմունքներին։

Եւ մինչ վշտի զգացմունքը վերացել էր հայ ժողովրդից, դեկտեմբերի 11-ին Էջմիածնից տեղացող բօթաբեր հեռագիրները և քաղաքիս հայ եկեղեցիների զանգերի տխրահունչ ղօղանջիւնը գուժեցին հայ ազգին, որ Նորին օծութիւն ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ-ը 'ի Տէր է հանգել ամսոյս 11 'ի լոյս գիշերը սրտի կաթուածից։

Եւ միանգամից ցնցուեց ու սուգ զգեցաւ Հայ ժողովուրդը աշխարհի մի ծայրից մինչև միւսը, ուր և բնակ-ւում է նա։

Հազիւ մի տարի էր անցել այն օրից, ինչ որ նա մուտ էր գործել իւր նուիրական պաշտօնը, դեռ նոր էր վերացել սգի քողը Լուսաւորչի գահի վրայից և եկեղեցին ընդունել իր արժանընտիր փեսան, դեռ իր ծանր պաշտօնավարութիւնն հազիւ սկզբնաւորած, և ահա միանգամից վերստին սգի մէջ ընկղմուեց հայ ժողովուրդն ու եկեղեցին և այրիացաւ Էջմիածնի համազգային Աթոռը, անորոշութեան մատնուեցին ազգային եկեղեցական գործերը։

Հայ ազգի հետ մենք ևս վշտամբեր հոգով ողբում ենք անդառնալի և մեծ կորուստը և մաղթում, որ շուտով վերանայ տխրութեան և սգի քողը Հայ բազմաչարչար եկեղեցուց և ինչ որ չկարողացաւ իրագործել երջանկազարդ Հայրապետը՝ Հայ բազմակարօտ ժողովրդի բարօրութեան և Հայ եկե-

ղեցու պայծառութեան համար՝ այն ամենը մարմնանայ Նորա արժանաւոր յաջորդի ձեռքով։

Արդարների յիշատակը օրհնութեամբ թող յիշուի։